№ 101 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 30 **1897** ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 30 № 101

ՔԱՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱՓԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱԲԱԹԱԿՎՈՒՄԷ

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը 2 ռ., ամսական՝ 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ»՝ կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կղերը անուղղելի է. Շահի կառավարութիւնը և հայերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ո՞ւր մնաց Թիֆլիսի կոմիտէը. Միջազգային վիճակագրական կոնգրէս. Մատենագրութիւն. Նամակ Երևանից. Նամակ Բաթումից. Նամակ Ռիգայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սահմանագծի դէպքերը. Երկպետեան դաշնակցութիւն. Թիւրքերը հրճվում են. Նամակ Բուխարայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳՐԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Քրդեր.

ԿՂԵՐԸ ԱՆՈՒՂՂԵԼԻ Է

Ամերիկայի հայերի նորընտիր հոգևոր հովիւը՝ վերջին ժամանակներս մի ընդհանուր հովուական շրջաբերական է ուղղել Ամերիկայի հայ գաղթականութեան, որից երևում է, որ Ամերիկայի հայ գաղթականութիւնը որոշել է՝ իր ներքին, ազգային գործերը վարելու համար, մշակել և գործադրել մի ներքին կանոնադրութիւն։ Այդ նպատակը իրագործելու համար որոշված է՝ դիմարել Ուսար քաղաքում ներկայացուցիչների ժողով. հայաշատ քաղաքների, ինչպէս Ուսար, Պրովիդանս, Լօրէնս, Բոսաոն, Նիւ-Եօրկ քաղաքների գաղութները պէտք է երկերկու, իսկ մնացած քաղաքները մի-մի պատգամաւոր կամ երեսփոխան ուղարկեն կենտրոնական ժողովին մասնակցելու համար։

Մենք միանգամայն համակրելի ենք գտնում Ամերիկայի հայ գաղթականութեան ձգտումը՝ օգտվել ամերիկական օրէնքների շնորհած լայն ազատութիւնից և հաստատել համայնական ինքնավարութիւն, համայնքի ներքին կամ ազգային գործերը վարելու համար։ Ամերիկայի պէս մի ազատ երկրում ունենալ ներքին ազգային վարչութիւն, որ հոգ տանի հայ համայնքի բարոյական, մտաւոր և տնտեսական վիճակի զարգացման մասին՝ ոչ միայն ցանկալի, այլ և անյետաձգելի գործ է։

Սակայն այդ նպատակը իրագործելու և ամբողջ հայ կոլոնիային օգտակար լինելու համար, պէտք է համախմբվել, միահամուռ և միաբան ոյժերով գործել։ Այդ տեսակէտից մենք անպայման կերպով պախարակում և դատապարտում ենք, իբրև վնասակար, հակակուլտուրական և նեղասիրտ քաղաքականութիւն, այն որոշումը, որ արել է առժամանակեայ ազգային վարչութիւնը, կամ Ուսարի եկեղեցական հոգաբարձութիւնը իր նախագահի հետ միասին.—թոյլ տալ մասնակցել ազգային ընդհանուր երեսփոխանական ժողովին Ամերիկայում ապրող միայն այն հայերին, որոնք „Հայաստանեայց ազգային եկեղեցոյ անդամներն են"։ Ուրեմն, աւելի պարզ խօսելով, ընդհանուր ազգային գործին մասնակցել իրաւունք արվում է միայն այն հայերին, որոնք դաւանութեամբ լուսաւորչական են, իսկ մնացածները, բողոքական, կաթոլիկ կամ այլ դաւանութեան պատկանող հայերը զրկվում են այդ իրաւունքից, որովհետև լուսաւորչական չեն։

Ամերիկայի պէս մի ազատ երկրում, քրիստոնեորդ դարի շեմքում, վերջապէս թիւրքաց Հայաստանի սարսափելի դառն փորձերից յետոյ, յարուցանել դաւանաբանական խնդիր, քարոզել միջնադարեան մի գաղափար, որ վաղուց դատապարտված է, իբրև ոչ մի կրիտիկայի չը դիմացող, մեղ թվում է ոչ միայն անժամանակակից, այլ և վայրենի։ Հայ հոգևորականութիւնը չը կամեցաւ կամ չը կարողացաւ մինչև այժմ հասկանալ, որ անցան այն „երանելի" ժամանակները, երբ հայ համարվում էր միայն նա, ով լուսաւորչական էր։ Այժմ այդպիսի փթած, վնասակար գաղափար այլ ևս ոչ ոք չէ դաւանում. այժմ այդպիսի ջախջախված զէնքերով այլ ևս ոչ ոք չէ կռւում, և ներկայ հանգամանքներում նորից յարուցանել կրօնական անհանդուրժողականութեան հարց,—դա միայն նոր ապացոյց է այն բարոյական վերջնական սնանկութեան, որին հասել է հայ հոգևորականութիւնը։

Մենք յոյս ունենք, որ Ամերիկայի հայ գաղթականութիւնը իր ամբողջ ոյժով կը բողոքէ այդպիսի մի միջնադարեան, խաւար գաղափարի դէմ և թոյլ չի տայ, որ ազգային համերաշխութեան սկզբունքը վտանգի ենթարկվի անհանդուրժողականութեան և մոլեռանդութեան ներկայացուցիչների կողմից։ Եւ, վերջապէս, մենք չենք հասկանում, ի՞նչ հարկաւորութիւն կայ Ամերիկայի պէս երկրում ազգային ներքին ինքնավարութեան խնդիրը կապել անպատճառ հոգևորականութեան և եկեղեցու հետ. այդ ասպարիզում ժողովուրդը կարող է ամենայն հեշտութեամբ գործել, առանց հոգևորականութեան միջամտութեան և աջակցութեան, քանի որ հայ հոգևորականութիւնը իր ագիտութեամբ և միջնադարեան դաղափարներով չէ կարողանում ընթանալ ժամանակի պահանջների հետ և իր շահերը դերադասում է ժողովրդի շահերից։

ՇԱՀԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

—

Մենք արդէն հաղորդեցինք, որ ներկայումս Պարսկաստանի և Թիւրքիայի մէջ դիպլոմատիական յարաբերութիւնները խիստ լարված են՝ Ատրպատականի սահմանագլխում վերջերս պատահած պարսկա-քրդական ընդհարումների պատճառով։ Այդ առիթով Թէհրանի մեր թղթակիցը հաղորդում է մեզ հետևեալ հետաքրքիր տեղեկութիւնները.

«Պարսկա-թիւրքական սահմանագլխի խառնակութիւնները աղետալի հետևանք ունեցան Թէհրանի Թիւրքաց դեսպան ծերունի Միւնիֆ բէյի համար. դեսպանը, չահի խիստ պահանջմամբ, պաշտօնանկ եղաւ սուլթանի կողմից. նրա տեղ դեսպան է նշանակված Էրզրումի այժմեան վալին։ Վերջերս Միւնիֆ բէյ, հրահանգված սուլթանից, սկսել էր խիստ պահանջներ անել Մուզաֆէրէդդին չահից, որ սա յանձնի թիւրքաց կառավարութեան ձեռքը բազմաթիւ անմեղ հայ երիտասարդներ, պարսկահպատակ, որոնք իբր թէ յեղափոխականներ են՝ Թաւրիզի անգլիական հիւպատոսի վկայութեան համաձայն և մատնակցել են քիւրդ ցեղապետ Շարաֆ բէյի սպանութեան և նրա ցեղի ջնջման գործին։ Դրա հետ միասին դեսպանը մեղադրում է պարսից կառավարութեան, որ սա իբր թէ պաշտպանութիւն է ցոյց տալիս հայ յեղափոխականներին, և անարդական ոճով է խօսում Պարսկաստանի վարչական կարգերի մասին։ Այդ յանդգնութիւնը չափազանց դարձնում է չահին, որ հրամայում է մինիստրութեան քայլարարութիւններ պահանջել հայոց հոգևոր իշխանութիւնից. վերջինս տուեց հարկաւոր բայտարարութիւնները, որոնցից կառավարութիւնը համոզվեց, որ թիւրքաց դեսպանի բոլոր մեղադրանքները պարսկահպատակ հայերի մասին անհիմն են և նրանք որ և է առնչութիւն չունեն յեղափոխականների հետ։ Այդ պատճառով չահը հրամայեց յայտնել թիւրքաց կառավարութեան, որ բացարձակապես միակն է արևելեան հարցի հինգհարիւրամեայ արիւնալից պատմութեան մէջ։ Նա ցոյց տուեց, թէ ինչպէս մի քրիստոնեայ պետութիւն կարող է պաշտպանել իսլամի սրին մատնված անօգնական քրիստոնեաներին, և պաշտպանել այնպէս, որ արևելեան հարցը իր սովորական հրէշաւոր կերպարանքը չը ստանայ։

Ահա թէ ինչպէս Նապոլէօն III կատարեց այդ գործը։

Զը բաւականանալով սուլթանի կառավարութեան արած իր դիմումներով՝ նա եռանդուն պահանջ դրեց Եւրոպայի առաջ—իրապէս միջամտել մարդասիրների գործին։ Ինչպէս յայտնի է՝ արևելեան հարցի ամենաազէտալի կողմը Թիւրքիան չէ, այլ պետութիւնների փոխադարձ մրցութիւնն է։ Իւրաքանչիւր պետութիւն աչք ունի Թիւրքիայի վրա, ուստի իր սրբազան պարտքն է համարում խանգարել միւս պետութեան գործողութիւնները։ Նապոլէօն այդ հանգամանքը ուշադրեց, բացարձակ և ամենակտրական ձևով յայտարարելով, թէ Ֆրանսիան կամենում է քրիստոնեաներին օգնել, բայց մի և նոյն ժամանակ ոչինչ նիւթական և բարոյական չահի ակնկալութիւն չունի։ Նա առաջարկում էր ֆրանսիական զօրաբաժին ուղարկել Սիրիա՝ արդարութեան գործը կատարելու համար. նա ոչ Թիւրքիայի ամբողջութեանն էր սպառնում, ոչ որ և է պետութեան չահերին էր վնասում. նշանակում էր ժամանակ՝ երբ պիտի վերջացներ գործը և զօրքերը հանէր Սիրիայից։ Անգլիան, չը նայած այս դրական երաշխաւորութիւններին՝ սաստիկ ընդդիմացաւ, բայց Նապոլէօն հաստատակամութեամբ առաջ տարաւ իր պահանջը և վերջ ի վերջոյ ստացաւ Եւրոպայի հաւանութիւնը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԴԵՐ

—

Յաւելուած

—

Ասում են որ պատմութիւնը չէ կրկնվում։ Դա ճիշդ չէ Թիւրքաց բարբարոսութիւնների վերաբերմամբ. այստեղ պատմութիւնը կրկնվում է, այն էլ ոչ թէ մի կամ երկու անգամ։ Հէնց որ Լիբանանի և Սիրիայի կոտորածները երևան եկան իբրև զարհուրելի իրողութիւն՝ խկոյն յայտնի դարձաւ, որ այդքան անմեղ արիւն (կոտորված մարդկանց թիւը հաշւում է 11 հազար, բայց շատերը այդ թիւը հասցնում են 30 հազարի) թափվել է նախամտածած ծրագրով. գազանութիւնները կազմակերպված էին այնպէս, ինչպէս դրանից առաջ և յետոյ։ Մանրամասնութիւնները սոսկալի են, բայց Թիւրքիայի համար սովորական բաներ են։

Ամենահաւատարիմ տեղեկութիւններ պէտք է համարել անգլիական աղբիւրներից բղխածները, որովհետև Անգլիան այն ժամանակ Թիւրքիայի բարեկամն էր։ Եւ ահա այդ տեղեկութիւնները միանգամայն հաւատացնում են, որ գազանութիւնների մեծ մասը կատարել են սուլթանի զօրքերը։ Դրուշները, որքան և վայրենի լինէին, Թիւրք զինուորներից անգթութեան դասեր էին առնում, դասեր, որոնք զարմանք էին պատճառում նոյն իսկ այդ անկիրթ ու արիւնարբու ցեղին։ Կանանց բռնաբարելը, ծծկեր երեխաներ կոտորելը՝ սատանայական բոլոր կերպերով—սրանք հերոսութիւններ էին, որոնք վերապահված էին միայն փաղիշահի ասկարներին։ Իսկ սրանց հրամանատարների վարմունքը միայն նողկանք ու վրդովմունք կարող է պատճառել։ Այսպէս, Հաչբէյ անունով մեծ քաղաքում Օսման-բէյ անունը կրող մի հրէշ հետևեալ կերպով կատարեց բարձրից իրան տուած հրամանները։ Նախ նա համոզեց քրիստոնեաներին զինաթափ լինել։ Ապա այդ թշուառներին փակեց սէրայի բակում և ութ օր կերակրում էր նրանց այնքան, որ սովամահ չը լինեն։ Եւ ահա, երբ քրիստոնեաները բոլորովին թուլացել էին քաղցածութիւնից ու կորցրել էին դիմադրելու ոյժը՝ Օսման-բէյ բաց արաւ դռները և թոյլ տուեց, որ զրուշները ներս խուժեն ու կոտորեն 800 հոգի տղամարդ, կին և երեխայ. ոչ ոք չը պախարակեց Օսման-բէյի վարմունքը։ Ընդհակառակն, երբ այդ զզուելի մսագործը գնաց Դամասկոս՝ այնտեղի վալի Ահմէդ-փաշան և ամբողջ քաղաքը ընդունեցին նրան իբրև մի երևելի հերոսի։

IV

Լիբանանի և Սիրիայի գազանութիւնները սարսափ տարածեցին ամբողջ Եւրոպայում։ Բացի լրագրական թղթակիցներից, ահռելի իրողութիւնը պաշտօնապէս նկարագրեցին նաև անգլիական կառավարութեան գործակալները։ Ինքնուրոյն մէկը, Կիրիլ Գրահամ, այնպիսի վառ գոյներով նկարեց պատկերը, որ լորդ Պալմէրստօնի կառավարութիւնը չը հաւատաց և մի այլ պաշտօնեայ ուղարկեց քննութիւն կատարելու համար. սակայն վերջինս բառ առ բառ հաստատեց Գրահամի գրածները։ Մի ուրիշ անգլիացի, կապիտան Պէյնտէր, նկարագրում էր, թէ ինչպէս ինքը ազատեց 2200-ից աւել կանայք և երեխաներ։ Նա գրում է. «Սրանք ամենքը սատացել էին հրազէնքի կամ սրի վերքեր այն ժամանակ, երբ փախչում էին քաղաքից, ուր կոտորվեցան բոլոր տղամարդիկ և արու երեխաները»։ Եւ այսպիսի բազմաթիւ վկաներ...

Կ. Պոլսում, ի հարկէ, սկսվեցան դիպլոմատիական ճնշումները։ Բ. Դուռը անմեղ ձևացաւ և պարզապէս յայտարարեց, թէ կռիւը լոկ դրուզների և մարոնիտների մէջ էր։ Եւ իր անմեղութիւնը ցոյց տալու համար, նա պատրաստակամութիւն յայտնեց կոտորածների հեղինակներին պատժելու և խաղաղութիւն ու կարգ հաստատելու։—Գործը այսպէս էլ կը թաղվեր դիւանագիտական թղթերի մէջ՝ եթէ չը լինէր Նապոլէօն III կայսրը։—Իբրև կաթոլիկ պետութեան գլխաւոր՝ նա իր պարտքը համարեց ձեռք առնել կոտորված կաթոլիկ քրիստոնեաների դատը։

Ինչ և լինի Նապոլէօն III Ֆրանսիայի համար՝ այսքանը չէ կարելի ուրանալ, որ արտաքին քաղաքականութեան մէջ նա գործով ցոյց է տուել, որ ազգերի ազատութեան ու մարդկային արդարութեան պաշտպանն է։ Նրա ձեռքով Իտալիան ազատվեց, նրա շնորհիւ Լիբանանին վիճակվեց մի բացառիկ բախտ։ Զարաբախտ կայսրի պատմագիրները այժմ ասում են, թէ այդ յատկութիւնը նրա մէջ մի սպեցիալ զգացմունք չէր, այլ լոկ քաղաքական արկածախնդրութեան մի միջոց. դրանով նա, որպէս թէ, կամենում էր ամրացնել իր խախուտ գահը և ժողովրդականութիւն ստանալ։ Հարկաւոր չէ որ մենք վիճենք այդ առարկութեան դէմ։ Նապոլէօնի անձնաւորութիւնը այստեղ մեզ չէ հետաքրքրում. կարևորը նրա կատարած գործն է, որ միակն է արևելեան հարցի հինգհարիւրամեայ արիւնալից պատմութեան մէջ։ Նա ցոյց տուեց, թէ ինչպէս մի քրիստոնեայ պետութիւն կարող է պաշտպանել իսլամի սրին մատնված անօգնական քրիստոնեաներին, և պաշտպանել այնպէս, որ արևելեան հարցը իր սովորական հրէշաւոր կերպարանքը չը ստանայ։

Ահա թէ ինչպէս Նապոլէօն III կատարեց այդ գործը։

Զը բաւականանալով սուլթանի կառավարութեան արած իր դիմումներով՝ նա եռանդուն պահանջ դրեց Եւրոպայի առաջ—իրապէս միջամտել մարդասիրների գործին։ Ինչպէս յայտնի է՝ արևելեան հարցի ամենաազէտալի կողմը Թիւրքիան չէ, այլ պետութիւնների փոխադարձ մրցութիւնն է։ Իւրաքանչիւր պետութիւն աչք ունի Թիւրքիայի վրա, ուստի իր սրբազան պարտքն է համարում խանգարել միւս պետութեան գործողութիւնները։ Նապոլէօն այդ հանգամանքը ուշադրեց, բացարձակ և ամենակտրական ձևով յայտարարելով, թէ Ֆրանսիան կամենում է քրիստոնեաներին օգնել, բայց մի և նոյն ժամանակ ոչինչ նիւթական և բարոյական չահի ակնկալութիւն չունի։ Նա առաջարկում էր ֆրանսիական զօրաբաժին ուղարկել Սիրիա՝ արդարութեան գործը կատարելու համար. նա ոչ Թիւրքիայի ամբողջութեանն էր սպառնում, ոչ որ և է պետութեան չահերին էր վնասում. նշանակում էր ժամանակ՝ երբ պիտի վերջացներ գործը և զօրքերը հանէր Սիրիայից։ Անգլիան, չը նայած այս դրական երաշխաւորութիւններին՝ սաստիկ ընդդիմացաւ, բայց Նապոլէօն հաստատակամութեամբ առաջ տարաւ իր պահանջը և վերջ ի վերջոյ ստացաւ Եւրոպայի հաւանութիւնը։

պէս մերժում է կատարել նրա հրամանը և ինքն անձամբ հեռագրով դիմելով սուլթանին, պահանջեց պաշտօնանկ անել Միւնիֆ բէյին: Սուլթանն ստիպվեց կատարել չարի կամքը»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՐ ՄՆԱՑ ԹԻՖԼԻՍԻ ԿՈՄԻՏԷՏԸ

Ներկայումս Թիֆլիսում գտնվում են աւելի քան հազար թիւրքահայ գաղթականներ: Ինչպէս արդէն հաղորդվեց «Մշակի» մէջ՝ այդ գաղթականները գալիս են Կարսի և Երևանի նահանգներից, ուր գիւղական հայ ազգաբնակութիւնը, ամբողջ երկու տարի պատսպարելով ու խնամելով նրանց մարդասիրաբար՝ այլ ևս անկարող է շարունակել իր օգնութիւնը իր աննախանձելի դրութեան պատճառով: Եւ ահա թշուառ գաղթականները, վերցնելով իրանց ընտանիքները՝ խումբ խումբ գալիս են Թիֆլիս, յուսալով այստեղ գործ գտնել կամ նիւթական օգնութիւն ստանալ՝ բաթում և Բագու գնալու համար, ուր, նրանց կարծիքով, հեշտ կարելի է գործ և աշխատութիւն գտնել: Նիհարած, քաղցած, մերկ, բոբիկ, նրանք թափառում են փողոցներում և դիմում այն միակ տեղը, որ ծանօթ է իրանց—հայոց Բարեգործական ընկերութեան դրասենեակը. բայց որքան մեծ է լինում նրանց յուսահատութիւնը, երբ այդտեղ էլ յայտնում են, որ չեն կարող օգնել, չեն կարող ամօքել նրանց ցաւերը: Շչմած, չուարած, խեղճ գաղթականը չը գիտէ ինչ միջոցի դիմէ, ուր գնայ:

Եւ սակայն, դեռ նորերս «Кавказъ» լրագրի մէջ յայտարարվեց պաշտօնապէս, որ գաղթականների օգտին հաւաքված դրամներից մնում է 36,000 ռուբլու մի խոշոր գումար, որը չէ գործածվում այն պատճառով, որ օգնութեան կարիքը չատ աննշան է:

Ի՞նչպէս բացատրել այս հակասութիւնը: Շատ պարզ կերպով: Տարակոյս չը կայ, որ կառավարութիւնը, բանալով ամբողջ կայսրութեան մէջ հանգանակութիւն Թիւրքիայից փախած հայ գաղթականների օգտին՝ կամեցել է մարդասիրական մի օգնութիւն ցոյց տալ ճակատագրից հալածված այդ թշուառ էակներին, որոնք իրանց կեանքը ազատել են թիւրքերի և քիւրդերի դաշոյններից, ապաւինելով Ռուսաստանի գթառատութեան: Եւ հէնց այդ նպատակով, կառավարութիւնը հաստատել է մի քանի քաղաքներում կոմիտէներ: Այդպիսի մի կոմիտէ հաստատվեց և Թիֆլիսում մի քանի ամիս առաջ: Ի հարկէ, այդ կոմիտէների գործն է յայտնել կառավարութեան գաղթականների կարիքների մասին, և կառավարութիւնը, ինչպէս արդէն ասել է մի քանի անգամ՝ անմիջապէս բաց կը թողնի հարկաւոր գումարը թշուառ գաղթականներին օգնելու համար:

Սակայն Թիֆլիսի կոմիտէը ահա երեք ամիս է, որ կատարեալ անգործունէութեան է մատնված. նա մինչև անգամ իր գրասենեակն էլ է փակել, և խեղճ գաղթականները, որ ոչ լեզու գիտեն, ոչ գիր՝ չեն իմանում ում և ուր դիմեն: Մինչև այժմ գոնէ նրանց օգնում էր հայոց Բարեգործական ընկերութիւնը այն գումարից, որ ուղարկվել էր Դանիայից. իսկ այժմ, այդ գումարը վերջացած լինելով, նա անկարող է շարունակել իր օգնութիւնը, քանի որ նրան իրաւունք չէր տրված, դանիական գումարից դուրս, օգնութիւն հասցնել գաղթականներին:

Թիֆլիսի կոմիտէը դադարեցրել է իր գործունէութիւնը այն պատճառով, որ նրա երեք անդամները հեռացել են քաղաքից ամառվայ պատճառով: Իսկ կառավարութիւնը, որ միայն այդ կոմիտէն է ճանաչում՝ կարծում է, թէ գաղթականներին օգնելու կարիքը դադարած է, քանի որ ոչ կոմիտէը, ոչ էլ իրանք գաղթականները չեն դիմում նրան, օգնութեան համար:

Եւ ահա, չնորհիւ Թիֆլիսի կոմիտէի յանցաւոր անտարբերութեան՝ թշուառ գաղթականները ստիպված են մերկ, սոված դեգերել փողոցներում, տանջվել զանազան հիւանդութիւններով, յուսահատվել, օգնութեան ոչ մի նշոյլ չը տեսնելով, իսկ նրանց օգտին հաւաքված գումարը այդ միջոցին մնում է անգործադրելի:

Ոչ մի տարակոյս չը կայ, որ եթէ Թիֆլիսի կոմիտէը դիմէր կառավարութեան և բացատրէր գաղթականների դառն վիճակը՝ Թիֆլիսի պ. նահանգապետը հարկաւոր միջնորդութիւն կանէր և անմիջապէս որոշ գումար բաց կը թողնվէր թշուառների ցաւերը ամոքելու համար:

Թիֆլիսի կոմիտէի վարմունքը ոչ մի կերպով արդարացնել չէ կարելի. նա կամ պարտաւոր է բարեխղճութեամբ կատարել իր ստանձնած պաշտօնը, և կամ հեռանալ, տպարկը թողնելով նրանց, որոնք ընդունակ են գործելու:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՆԳՐԷՍ

Օգոստոսի 18-ին, Պետերբուրգում տեղի ունեցաւ միջազգային վիճակագրական կոնգրէսի հանդիսաւոր բացումը: Գիտութիւնների Կայսերական Ակադէմիայի նախագահ մեծ իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ, բանալով ժողովի նիստը՝ մի ընդարձակ ճառ խօսեց վիճակագրութեան նշանակութեան մասին. նա յայտնեց այն միտքը, որ վիճակագրութիւնը ամենից չատ է նպաստում ինքնաճանաչութեան և «ճանաչիր քեզ» մտքի իրագործման: Վիճակագրութիւնը կարելի է համեմատել փարոսի հետ, որովհետև ինչպէս փարոսը լուսաւորում է նաւորդներին գիշերվայ մթութեան մէջ՝ նոյնպէս և վիճակագրութիւնը լուսաւորում է հասարակական երևոյթները մինչև նրանց խորքը:

Ժողովի պարապմունքները չարունակվեցին մինչև օգոստոսի 23-ը, յայտնի ստատիստիկ Բաուռնի նախագահութեամբ: Երկրորդ ընդհանուր ժողովում պրոֆէսոր Կէրէչի մի երկար զեկուցումն արեց XX դարի համաշխարհային մարդահամար կազմակերպելու մասին: Նա միացաւ Գիլիսմ ստատիստիկի առաջարկութեան հետ, կազմակերպել մինչև այդ ժամանակ համարակալների միլիոնաւոր զօրք: Նա վառ գոյներով նկարագրեց այն պատկերը, թէ ինչպէս այդ խաղաղ զօրքը թափանցում է երկրագնդի բոլոր կողմերը, մտնում է հօտէնտօտի, ամերիկական կարմրամորթ հնդիկի գծած խրճիթը և ասիական թափառական ցեղերի վրանը:

Երրորդ, վերջին ընդհանուր ժողովում, որ կայացաւ Լավասէրի նախագահութեամբ՝ վերջինս մի փայլուն և ուժեղ ճառ խօսեց, ամփոփելով կոնգրէսի կատարած գործը: Ապա նորվէգիական ստատիստիկ Կիէր առաջարկութիւն արեց նորվէգիական կառավարութեան կողմից, որ յաջորդ միջազգային վիճակագրական կոնգրէսը գումարվի 1899 թ. Քրիստինիայում: Այդ առաջարկութիւնը ընդունվեց բուռն ծափահարութիւններով, որից յետոյ ժողովը կատարեց ապագայ կոնգրէսի բիւրօի անդամների ընտրութիւնը և փակեց իր նիստերը: Նախագահ ընտրվեց նորից Բաուռնն:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Համառօտ պատմութիւն հայոց պրոֆէսոր Հ. Գէլցէրի. Թարգմանեց Հ. Գր. Վ. Գալֆմբերեան. —Վիեննա, 1897. 138 եր. 8°, գինը 60 կոպէկ:

Գրքոյկը բաղկացած է երեք մասերից. 1. «Պատմութիւն», որ ընդամենը $11^2/_3$ երես է գրաւած. 2. «Մատենագրութիւն»—$24^1/_2$ երես, և 3. «Եկեղեցական պատմութիւն հայոց»—56 երես: Կը նշանակէ որ գիրքը աւելի եկեղեցական պատմութիւն է: Աւելորդ է ասել, որ այսպիսի մինիատիւր գործի մէջ հեղինակը նոր բան չէր կարող ասել. և հայ ընթերցողը, որ հետաքրքրվում է իր ազգի քաղաքական անցեալով՝ չէ կարող դիմել գրքոյկի օգնութեան, քանի որ պատմութիւնը յուսահատական համառօտութիւն ունի: Միակ նորութիւնը, որ և, կարծում ենք, հրապուրել է հ. թարգմանչին՝ այն է, որ խորենացու պատմութիւնը ջնջված է, իսկ նրա տեղ գրված են օտար պատմաբանների և բնեռագրերի տուած կցկտուր տեղեկութիւնները: Արդեօք չատ չտապով չեն բանասէրները վերջնական դատապարտութեան վէճը կարդում խորենացու գլխին: Չը կայ փոքր ի չատէ հին ազգ, որի պատմութիւնը առասպելներով չը սկսվի: Բայց պատմութիւններից առասպելը վերջնականապէս չէ վանդված և չէ էլ կարելի վանդել: Առասպելը պատմութեան հետ խառն է միչտ. պատմաբանի գործն է՝ առասպելը բաժանել իրողութիւնից և բաւականանալ դրանով, մանաւանդ երբ խնդիրը դեռ ահագին վէճի տակ է:—Զարմանալի է. մինչդեռ մի տեղ աշխատում են ոչ միայն պահել այսպիսի կրօնական առասպելներ, ինչպէս են քարէ կարկուտը կամ արեգակի կանգնեցնելը, այլ և համարել նրանց բնական, նոյն իսկ գիտութեան հետ հաշտված՝ ուրիշ տեղ ջնջում, ոչնչացնում են այնպիսի առասպելներ, որոնք գոնէ մի ազգի պատմական աւանդութիւն են համարվում չատերի կողմից:

Աւելի հետաքրքրական բաժինը եկեղեցական պատմութիւնն է, այն էլ գլխաւորապէս այն տեղերում, ուր տրվում են աւելի մանրամասն տեղեկութիւններ կաթոլիկ և բողոքական հայերի մասին:—Եկեղեցական պատմութիւնը հասցրած է մինչև մեր օրերը և վերջանում է թարգմանչի հետևեալ ծանօթութեամբ. «Այստեղ հեղինակը վերջին տխուր դէպքերու համառօտ ակնարկութիւն մը կընէ, որոնք ամենածանօթ և միանգամայն սրտաճմլիկ ըլլալուն՝ զանց կառնենք»: Զանց առնելու պատճառները բոլորովին համոզիչ չեն: Նկատենք սակայն, որ հ. թարգմանիչը դրա փոխարէն դրել է օտար լեզուներով լոյս տեսած գրքերի ցուցակը, որոնք հրատարակվել են հայկական կոտորածների առիթով: 1895—1897 թուականներին, ինչպէս ցոյց է տալիս այդ ցուցակը, (որ լիակատար չէ) լոյս են տեսել 113 կտոր գիրք: Այս է հայերի միակ մխիթարութիւնը: Ուշադրութեան արժանի է նաև թարգմանչի մի այլ յաւելուածը—

Թիւրքիան, ի հարկէ, բողոքեց Ֆրանսիայի միջամտութեան դէմ և առաջ քաշեց իր հին երգերը: Նա ասում էր, թէ ոչ ոք իրաւունք չունի խառնվել իր ներքին գործերի մէջ, որ ինքը բաւականաչափ այժ ունի կարգը վերականգնելու և յանցաւորներին պատժելու համար, որ մահմեդականները սաստիկ կը գրգռվեն՝ եթէ քրիստոնեաները միջամտեն: Բայց Նապոլէօն ուշադրութիւն չը դարձրեց թրքական առասպելների վրա և, պատերազմական նաւեր ուղարկելով Սիրիայի ափերը՝ հրամայեց որ մի զօրաբաժին էլ գնայ: Տեսնելով Ֆրանսիայի այդ պատրաստութիւնները՝ Թիւրքիան աճապարեց իր ձեռքով վերջացնել իր գործը և, եթէ կարելի է, քաղաքական մի աչքակապութեամբ նորից խաբել Եւրոպան: Այդ նպատակով Բ. Դուռը Սիրիա ուղարկեց Ֆուադ-փաշային, տալով նրան անսահման լիազօրութիւններ՝ յանցաւորներին պատժելու համար: Նա իսկոյն ուղղորվեց Դամասկոս, ուր 700 մարդ կալանաւորեց, բոլորը մահմեդական խուժանից, զանց առնելով նշանաւոր մարդկանց, որոնք կոտորածների ղեկավարներն էին:

Ֆուադ-փաշա, իբրև թիւրք պաշտօնեայ, աշխարհի աչքին թօղ փչելու համար կը բաւականանար այդքանով: Բայց օգոստոսի 7-ին Շալօնի բանակից 6000 ֆրանսիացի զինուորներ գեներալ Դ' Օպտուլ-Բոֆօրի առաջնորդութեամբ ճանապարհ ընկաւ դէպի Սիրիա: Ահա ինչ էր գրում Նապոլէօն այդ զօրքին.

«Զինուորներ.

«Դուք գնում էք Սիրիա, և Ֆրանսիան հրճուանքով ողջունում է այդ արշաւանքը, որ միայն մի նպատակ ունի—արդարութեան և մարդկութեան իրաւունքների յաղթանակ:

«Եւ իրաւ, դուք պատերազմ չը պիտի մղէք որ և է պետութեան դէմ. դուք պիտի օգնէք սուլթանին, որ նորից հնազանդվեն անցեալ դարերի ֆանատիկոսութեամբ կուրացած նրա հպատակները:

«Այդ հեռաւոր երկրում, որ հարուստ է մեծամեծ յիշատակներով՝ դուք կը կատարէք ձեր պարտքը և ցոյց կը տաք, որ արժանի որդիներ էք այն հերոսների, որոնք փառաւոր կերպով ատնում էին այդ երկրում Քրիստոսի դրօշակը:

«Դուք մեծ քանակութիւն չէք կազմում, բայց ձեր քաջութիւնը և ձեր անուան հեղինակութիւնը կը լրացնեն ձեր փոքրաթիւ չարքերը. որովհետև այժմ ամեն տեղ, ուր երևում է ֆրանսիական դրօշակը՝ նրա առջևից գնում է մեծ գործը, իսկ ետևից գնում է մեծ ազգը»:

Գեներալ Դ'Օպտուլ-Բոֆօր սիրիական ափը իջաւ 1860 թ. օգոստոսի 16-ին: Ֆրանսիական զօրքը ոչ մի կռիւ չունեցաւ Սիրիայում, բայց և այդպէս, նրա գալուստը չատ հարկաւոր էր: Բանն այն է, որ Ֆուադ-փաշա առանց ֆրանսիացիների ճնշման ոչինչ էր անի Դամասկոսում: Գեներալ Դ'Օպտուլ-Բոֆօր պահանջում էր նրանից գործադրել խիստ պատիժներ մեղաւորների դէմ, հակառակ դէպքում սպառնում էր իր զօրքով մտնել Դամասկոս: Վերջինս մահմեդականների համար սրբազան քաղաք է, և Ֆուադ-փաշա հասկացաւ, թէ ինչքան վատ կը լինի՝ եթէ ֆրանսիացի գեներալը կատարէ իր սպառնալիքը: Այդ զօրաւոր ճնշման տակ միայն տեղի ունեցան մի չարք գործողութիւններ. 57 մահմեդականներ կախաղան հանվեցան, իսկ 111 ոստիկաններ հրացանի բռնվեցան: Իզուր ֆրանսիական հիւպատոսը ստիպողաբար պահանջում էր, որ բարձրաստիճան անձինք ևս պատիժ կրեն. Ֆուադ նրանց ձեռք չը տուեց: Բայց եւրոպական յանձնաժողովը, որ նշանակված էր պետութիւնների կողմից երկրի գործերը կարգադրելու համար, մանաւանդ ֆրանսիական զօրքերը, հարկադրեցին փաշային գոնէ մի դէպքում զիջանել. Դամասկոսի վալին, Ահմէդ-փաշա և նրա գործակիցները դատի ենթարկվեցան: Ֆուադ Ահմէդին Կ. Պոլիս ուղարկեց, սակայն ֆրանսիական դեսպանի պահանջմամբ նրան վերադարձրին Դամասկոս, ուր նա մահվան դատապարտվեց և հրացանի բռնվեց: Նոյն վիճակին արժանացան և ուրիշները, որոնց թւում և Օսմանբէյը, Հաչ-բէյի դահիճը: Խուրշիդ և Թահիր փաշաները Աքիա աքսորվեցան: Թիւրքաց դատարանը, այնու ամենայնիւ, խիստ էր միայն դրուզների վերաբերմամբ, իսկ թիւրքերին պահպանում էր: Վերջերում, եւրոպական յանձնաժողովի ստիպմամբ, 2491 դրուզներ հինգ տարի ժամանակով աքսորվեցան Տրիպոլիս, իսկ թիւրք պաշտօնեաները Արշիպելագոսի զանազան կողմերն ուղարկվեցան:

Բացի այս բոլորից, եւրոպական յանձնաժողովը, երկար բանակցութիւններից յետոյ, մեծ դժուարութեամբ կարողացաւ թիւրքաց կառավարութեան ստիպել, որ Դամասկոսի և Լիբանանի վիլայեթներին 75 միլիոն դրուշ վարձատրութիւն բաժանվի. այդ գումարը կառավարութիւնը պիտի հաւաքէր դրուզներից: Եւրոպան չը սպասեց, թէ երբ Բ. Դուռը կը կատարէ իր պարտականութիւնը. առատ նուէրներ ուղարկեցին քրիստոնեաներին. միայն Ֆրանսիայից «Oeuvre des écoles d'Orient» հիմնարկութիւնը *) հաւաքեց և ուղարկեց 2,800,000 ֆրանկ: Լիբանանում թիւրք և ֆրանսիական զօրքերը սկսեցին նորոգել քրիստոնեաների քանդված տները. թիւրք զօրքը ի հարկէ ձևի համար էր մանակցում: Անհասարակ, անուրանալի է, որ եթէ չը լինէին ֆրանսիական զօրքերը՝ կոտորածների ղեկավարներից ոչ մէկն էլ չէր պատժվի:

Այժմեան ժամանակ էլ թիւրքիայի բարեկամները ասում են, թէ այդ երկիրը հեշտութեամբ կը բարեկարգվէր՝ եթէ այնտեղ լինէին լաւ պաշտօնեաներ: Թէ որքան անհիմն է այդ միտքը՝ ցոյց է տալիս Ֆուադ-փաշան: Ցայտնի է որ սա թիւրքիայի պետական ամենալաւ գործիչներից մէկն էր—ոչ-ֆանատիկոս, կրթված, հասկացող մի մարդ **): Բայց այսպիսի պաշտօնեան անգամ չը կարողացաւ Դամասկոսում թողնել թիւրք մարդու, իսլամի զաւակի երկդիմի ու խորամանկ քաղաքականութիւնը: Նա միայն խաբել էր աչխատում, թօղ էր փչում քրիստոնեայ աչխարհի աչքերին: Գեներալ Դ' Օպտուլ—Բոֆօր կամենում էր կալանաւորել դրուզների առաջնորդներին և այդ պատճառով թիւրք զօրքերի հետ մի արչաւանք սկսեց դէպի սարերը: Թիւրքերը խաբեցին ֆրանսիացիներին և այնպէս արին, որ դրուզների առաջնորդները անցան զօրքերի միջով ու փախան Հաուրանի անապատը: Ֆուադ ամեն դիւրութիւններ տուեց, որ բանտարկված բարձրաստիճան մարդիկ փախչեն բանտերից. փախան ամենայանդուգն եղեռնագործները. նոյն իսկ Ահմէդ-փաշայի մահվան վրա տարակոյս յայտնեցին Ֆրանսիայի պաշտօնական շրջաններում: Ֆուատ-փաշա ցոյց տուեց, որ նոյն իսկ ամենալաւ թիւրք պաշտօնեան չէ կարող արդարացաւ լինել՝ երբ գործը վերաբերվում է մահմեդականներին և քրիստոնեաներին:

Ֆրանսիական զօրքերը Սիրիայում պիտի մը-

*) Այս հիմնարկութիւնը այժմ էլ, յանձին իր նախագահ Հայր Շարմբոնեի, եռանդուն կերպով գործում է հայերի օգտին:

**) Սա այն Ֆուադ փաշան է, որի կտակը անցեալ տարի տպագրվեց «Մշակի» մէջ:

«ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒՀԻ ԺԱՄԱԿԱՑՈՒԹԻՒՆ» — Ամսական գրական հանդէս։ Խմբագիր՝ Ս. Փափազեան։ Տպագրեալ Ս. Էջմիածնի տպարանի մէջ։ Տարեգրութիւն Ա. հատոր։ Գինը 1 ռուբլի։

Ամսագրի հրատարակութեան ծրագրի համաձայն, Ս. Էջմիածնի տպարանի մէջ տպագրուեցաւ «Տարեգրութիւն» անունով գրական հանդէսի Ա. հատորը։ Ամսագրի խմբագրութիւնը ստանձնեցին Ս. Գարագաշեանը, Ս. Գանձակեցին, Ս. Գրիգորեանը, Ս. Գրիգորեանը, Ս. Գրիգորեանը, Ս. Գրիգորեանը, Ս. Գրիգորեանը, Ս. Գրիգորեանը։ Ամսագրի հրատարակութեան ծրագրի համաձայն, Ս. Էջմիածնի տպարանի մէջ տպագրուեցաւ «Տարեգրութիւն» անունով գրական հանդէսի Ա. հատորը։ Գինը 1 ռուբլի։

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» — Ամսագիր։ Խմբագիր՝ Ս. Գարագաշեան։ Տպագրեալ Ս. Էջմիածնի տպարանի մէջ։ Տարեգրութիւն Ա. հատոր

—

«Ամերիկայի Ձայն» ռադիոն հայտնում է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող հայ գաղթականներին հանձնարարվել է հավաքագրվել ռազմական ծառայության։ Ինչպես հայտնի է, Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող հայերի մեծ մասը ունի ռուսական քաղաքացիություն։ Ամերիկան ռազմական գործողություններ է վարում Ռուսաստանի դեմ։ Ինչպիսի՞ դիրքորոշում պետք է ունենան ռուսաստանցի հայերը։ Ինչպիսի՞ դիրքորոշում ունի Հայաստանի Հանրապետությունը։ Ինչպիսի՞ դիրքորոշում ունի Հայաստանի Սահմանադր

պտնել մեր իրաւունքը և թոյլ չը տալ, որ ոտք կոխեն հայրենիքի հողի վրա։ Մենք ապաւինեցանք Աստուծուն և կռուի մէջ մտանք։ Հազար փառք ամենակարողին։ Աստուծու և մեր Մարգարէի հոգւոր օգնութեամբ, մենք յաղթող դուրս եկանք։

«Այդ պատերազմում մեր զինուորների ցոյց տուած քաջութիւնը և անձնուիրութիւնը ինձ ուրախութեամբ լցրին և ես չատ հպարտանում եմ։ Ամբողջ աշխարհը ծանօթացաց այն կարգապահութեան, որ նրանք ցոյց տուին այն երկրում, ուր նրանք մտնում էին յաղթական. ես չատ գոհ եմ և երջանիկ։

«Ես խրել եմ տուել մի յատուկ մէդալ յաւերժացնելու համար հելլենների դէմ տարած յաղթութեան յիշատակը։ Ձեր հաւատարմութեան, անձնուիրութեան և քաջութեան ի վարձատրութիւն, իւրաքանչիւրիդ տալիս եմ մի մի հատ այդ մէդալից։ Ստացէք այդ մէդալը Աստուծու խօսքով զարդարված այս դրօշակի հովանու տակ։»

Մէդալ ստացող սպաների թիւն 68 էր, իսկ զինուորներինը՝ 1240։ Բացի դրանից սպաները ստացան մէջտեղայ ոսկիկը ոչ ի հաշիւ տարեկան ռոճկի, իսկ ամեն մի զինուոր ստացաւ 2 օսմանեան լիրա։

Այդ ծանրախրութիւնը մեծ ցնծութիւն և ոգեւորութիւն է առաջ բերել ամբողջ մուսուլման աշխարհում։

ՆԱՄԱԿ ՐՈՒՄԻՆԻԱՅԻՑ

Բուքրէշ, օգոստոսի 18-ին

«Freie Presse» լրագրի թղթակիցը Կ. Պոլսում մի տեսակցութիւն ունեցաւ արտաքին գործերի մինիստրի դլխաւոր քարտուղարի՝ Նուրեան էֆէնդիի հետ։ Խօսակցութիւնը վերջին խռովութիւնների և ընդհանրապէս հայոց հարցի մասին էր։ Ահա թէ ինչ ճառեց երեւելի Նուրեանը։

«Ձեզ յայտնի է, պարոն, որ Բերլինի կոնգրէսի մէջ անգլիական դիպլոմատիայի ձեռքով 61-դ յօդուածը մտցնելուց առաջ՝ չը կար հայոց հարց։ Հայաստանը մի երկիր էր, որ միմիայն պատմական հետաքրքրութիւն էր ներկայացնում եւրոպական ազգերի համար։ Սկսած այն ժամանակից, երբ Բիւզանդիան անցաւ Թիւրքերի ձեռքը՝ ապրում էր հայը կատարեալ խաղաղութեան և ապահովութեան մէջ, հայերի թիւը աստիճանաբար մեծանում էր, հարստութիւնները աճում էին, կրօնը մնում էր անբռնաբարելի։ Բոլոր օտարերկրացի ճանապարհորդները վկայում են, որ ամբողջ Անատոլիայում առեւտուրը և արդիւնաբերութիւնը ոչ-մահմէտականների ձեռքումն են, որ ամենաբարեբեր անկիւնները և ամենածաղկած քաղաքները պատկանում են քրիստոնեաներին։ Իսկ դրա պատճառն այն է, որ մուսուլմանը, իր տունն ու այգին թողած՝ հինգ տարով զինւոր է գնում, մինչդեռ հայը նոյն ժամանակամիջոցում տանը մնալով, հարստացնում է իրան։ Հարկերի քանակութիւնը նոյնն է երկուսի համար, այն տարբերութեամբ միայն, որ թիւրքը հինգ տարի կորցնելով, չէ կարողանում իր տուրքը վճարել, այն ինչ հայը այնքան է շահում, որ համ տուրքն է վճարում, համ էլ ապրում է առատութեան մէջ։ Սակայն, արի տես, որ հայերը դարձեալ հակապետական մղաքեր են քարոզում։ Դրա պատճառն էլ պարզ է։ Ուշք դարձրէք. հայ ագիտատորների դլխաւորներից ոչ մէկը 40 տարին չէ անցրած։ Եւ եթէ մօտ ծանօթանաք՝ կը տեսնէք, որ դրանք կազմում են այն այլասերված տարրը, որը ծնունդ է փոքր-Ասիայի մէջ ամենուրեք տարածված ամերիկական դպրոցների։ Դրանք են, որ սերմանում են իրանց սաների դլխում այն մտքերը, որոնց ներկայացուցիչն է այսօր երիտասարդ Հայաստանը,—ազատութեան, հաւասարութեան մտքեր, որոնք մինչև իսկ ամենաքաղաքակիրթ Հիւսիսային Ամերիկայում չեն իրագործվում։ Երիտասարդ Արմինը,—որ և է գեղջուկի տղայ,—ընկնում է այդ ահագին հիմնարկութիւններից մէկի մէջ Մարուանում կամ Բիթլիսում, Էրզրումում կամ թէ Վանում—և անա այդտեղ ձեռք է բերում այն յատկութիւնները, որոնք, իր կարծիքով, անհրաժեշտ են ազատ ազատ հայրենիքի պարլամենտի անդամ լինելու համար։ Իսկ իր միջնավայրում, իբրև քաղաքացի՝ նա բոլորովին անպէտք է, այլասերված, déclassé։ Հրաժարվում է իր ծնողներից, որոնց ներկայութիւնը ճնշում է իրան, հրաժարվում է արհեստից, գլխի մէջ քաշում է։ Գանում է իր նմաններին, կազմում են գաղտնի ժողովներ, բերել են տալիս անիշխանական թերթեր, փառաբանում են սարսափն ու սպանութիւնը, կրակն ու թոյնը... Եւ այդ կատաղած ֆանատիկոսները տարածում են նոյն մտքերը աղէտ ամբոխի մէջ, հեշտութեամբ վառում են ապստամբութեան կրակը և ալեկոծում հասարակաց անդորրութիւնը։ Արտասահմանեան կոմիտէներից առատ նըպաստներ են ստանում՝ իրանց դժոխային մտքերն իրագործելու համար։ Օրէնք չը կայ դրանց համար. կարդացէք դրանց անիշխանական թերթերը. անիշխանական դաղափարներից զատ՝ ոչինչ։ Ոչ մի խօսք կարգապահութեան, ոչ մի խորհուրդ արդարութեան, մարդասիրութեան, եղբայրութեան։ Երազում են նրանք մի ազատ հայրենիք, ազատ ամեն տուրքից, ուր չը կայ կարիք, չը կայ աշխատանք, ուր հարուստն իր քրտինքով վաստակած հարստութիւնը պիտի բաժանէ աղքատների հետ և այլն և այլն։

«Անիրաւացի կը լինէր մուսուլմաններին ֆանատիկոսութեան մէջ մեղադրել։ Ֆանատիկոսու կատաղի է թիւրքը իր հաւատակիցների նըկատմամբ՝ երբ որոնք ծոյլ ու պարտաղանց են լինում, բայց երբէք քրիստոնեաների դէմ։ Դուք չէք կարող պատմութեան մէջ ցոյց տալ մի դէպք, երբ մահմէտականները քրիստոնեաների մէջ կոտորած անէին յանուն կրօնի։ Ո՞վ կարող էր խանգարել Օմարին բնաջինջ անել քրիստոնէութեան և հրէականութեան բոլոր հետքերը այն միջոցին, երբ նա մուտք էր գործում Երուսաղէմ։ Այսօր ես մեր վեհապետը հովանաւորութիւն և ապաստան է տալիս հաղարաւոր տառապեալ հրէաներին։ Որչափ էլ հայ ագիտատորները սատակացնեն մուսուլմանների կատաղութիւնը, որչափ էլ աշխատեն նրանք դագաթնակէտին հասցնել մահմէտական ազգարնակութեան ատելութիւնն ու զրգռումը՝ այնու ամենայնիւ պէտք է համոզված լինին, որ բոլոր մուսուլմանները, իբրև հաւատարիմ ծառաներ իրանց վեհապետի ու խալիֆի՝ հեռու կը մնան միջամեն խռովութիւնից, քանի որ գիտեն, որ ինքը վեհապետը պէտք եղած միջոցները ձեռք կառնէ երկրի խաղաղութիւնը ապահովելու»։

Х.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բէրլինի «Tageblatt» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ ամեն բան ցոյց է տալիս, թէ Թիւրքիան մտադիր է օգուտ քաղել Յունաստանի դէմ տարած իր յաղթութիւնից և ամբողջ երկրագնդի մահմետական ազգերի վերաբերմամբ առաջաւոր դեր խաղալ, իբրև մի պետութիւն, որ կոչված է ամբողջ մահմետականութեան նեցուկը լինելու։ Թիւրքիայի ազդեցութիւնը այդ ուղղութեամբ արդէն զգալի է դարձել Հնդկաստանի սահմանագլխում ծագած խռովութիւնների մէջ, և զանազան կողմերից հասած լուրերը ցոյց են տալիս, թէ կամաւոր դրամական հանդանակութիւններ կատարվում են թիւրքաց զօրքի օգտին ոչ միայն օսմանեան կայսրութեան սահմաններում, այլ և Տրիպոլիսի անկախ արաբական ցեղերի մէջ, ինչպէս նաև Եգիպտոսում, Հնդկաստանում, Ալժիրում, Տունիսում և նոյն իսկ ամենահեռաւոր մահմետականաբնակ երկիրներում։ Մուսուլմանների նուիրած դրամները պէտք է գործադրվեն թիւրքաց զօրքի պահպանութեան համար և նրանցով պէտք է միջոց տրվի սուլթանին—գոնէ այդպէս են բացատրում նուիրողներին նպատակը—չարունակել պատերազմը։ Նոյն իսկ Եավա կղզում հանդանակութիւն է բացվել ի նպաստ թիւրքաց զօրքի։

—Նորերս, Շլեյցարիայում, Բազել քաղաքում, ինչպէս հաղորդեցին հեռագիրները՝ տեղի ունեցաւ «սիօնականների» կոնգրէսը։ Սիօնականներ կոչվում են այն հրէաները, որոնք չեն ցանկանում ձուլվել այն միջավայրի հետ, ուր նրանք այժմ ապրում են, և նպատակ են դրել մի նոր հայրենիք ստեղծել իրանց համար, միջազգային իրաւունքի հովանաւորութեան տակ. իրանց անունը վեր են առել Երուսաղէմի «Սիօն» սարից։ Կոնգրէսին մասնակցում էին 200 ներկայացուցիչներ, որոնք եկել էին Եւրոպայից, Ամերիկայից և Պալեստինից։ Հաւատարների շարքում զանվում էր և յայտնի գրող Մարկս Նորդաու, ինչպէս և մի քանի հոչակաւոր եւրոպական զիտնականներ, ծագումով հրէայ։ Նորդաու յայտնեց այն միտքը, որ Իսրայէլը ուրախ կը լինէր մաքրել իր բարի անունը արտաւորող տարրերից, և եթէ հրէականութիւնը ենթարկվեց բազմաթիւ ազէտների ու ծագից անտանելի տառապանքների՝ այդ բոլորի պատճառն այն հրէաներն են, որոնք ամաչում են իրանց ծագումից և անարժան են որ և է տեղ գրաւել եւրոպական հասարակութեան մէջ։ Կոնգրէսը քուէարկեց նաև չնորհակալութեան (!) մի ուղերձ սուլթանին, այն պաշտպանութեան համար, որ նա ցոյց է տալիս հրէաներին իր կայսրութեան մէջ։ Երեի սիօնականները արդէն բարեբախտութիւն են համարում, որ իրանց էլ չը կոտորեցին հայերի պէս և թոյլ տուին կողոպտել հայերին։

—Կ. Պոլսից հեռագրում են «Standard» լրագրին, որ սալամից յետոյ սուլթանին ներկայացաւ կրետացի մուսուլմանների կողմից մի պատգամաւորութիւն և յանձնեց նրան մի աղերսագիր, որի մէջ նրան խնդրում են մարգարէի անունով՝ նորից իր ձեռքն առնել կղզու կառավարութիւնը և վերջապէս դադարեցնել այնտեղ տիրող անիշխանութիւնը։

—Կ. Պոլսում, Եըլդըզ-Քիոսկի պալատում, չուտով մի ցուցահանդէս պէտք է բացվի։ Սուլթանը հրամայել է սարքել մի բարեգործական բազար, ուր պէտք է ծախվեն վերջին պատերազմում վիրաւորվածների օգտին ստացված զանազան առարկաներ։ Ինքն «կարմիր սուլթանը» նուիրել է ցուցահանդէսի համար բազմաթիւ չքեղ առարկաներ. նուէրներ գալիս են ամեն կողմից։ Փաշաները, բէյերը և նրանց կանայք սուլթանից յետ չեն մնում։ Ցետ չէ մնացել և գերմանական Վիլհելմ կայսրը. նա ուղարկել է այդ բարեգործական բազարի համար երեք արդդ «objets d'art», գեղարուեստի առարկաներ, որոնց մէջ իր ձեռքով նկարած մի քանի պատկերներ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վարնայում հրատարակվող «Հայելի» թերթում տպագրված է հետեւեալը.

Բաց նամակ

Առ Տեառ Մ... Ա...արքեպս., այժմ Ռուսաստանի և Նամակագիր „Մշակի“.

«Երեք սև աստղերու տակ ինքզինքիդ ծածկած կարծելով Պուլկարիոյ Հայ մամուլի մասին ժայթքած լուսանկներդիդ կարդացինք։ Պէտք էր մեզի ձեր ով ըլլալը հասկնալ, ուստի Բոժոժիկը հրեղէն սուր հանդակով անմիջապէս ի Կովկաս «Մշակի» տպարանը ղրկեցինք, ուր վերոյիշեալ երեք աստղերը աւրելով՝ տակէն ձեր անունը երեան հաներ էր։

«Անշուշտ կը զարմանաք Պարոն, մեր այս յայտնութեանը վրայ. պէտք է համոզուիք որ եթէ մինչև իսկ Սիպերիոյ սառնամանեաց տակ ծածկուելով հրատարակէիք ձեր հայհոյանքը՝ սպայէլ Բոժոժիկի ձեռքէն դարձեալ չէիք կրնար ազատել օձիքնիդ. ուստի ընկերացէք մեզի հետ ծափահարել Բոժոժիկի ձեր վրայ տարած այս յաղթանակը։

«Որովհետև դուք ձեր նոյն գրութիւնը մերթ թրքահայերէն և մերթ ռուսահայերենով ըրած էք, ուստի պատասխանում ենք որ կեանքերնուդ մէջ դէմքերնիս չի տեսած ու հետերնիս չի խօսած անձնաւորութիւնները նախատելովնիդ ձեր տխմար մի արարած լինելն ապացուցանում էք։ Ուրեմն ի գիմաց Բոլգարական հայ մամուլի՝ առաջարկում ենք ձեզ հրապարակաւ ներումն խնդրել նոցանից, ապա թէ ոչ պիտի յանձնենք զձեզ Բոժոժիկի, որպէս զի կենդանագիրդ ցոյց տայ Հայելիի միջոցում։ Փախուստի ճամբայ չունիք։ Եթէ համակերպիք մեր առաջարկին՝ կոմսի փապրիկայի արտադրութիւնից մի կառավթ նըւիրում ենք ձեզ, ապա թէ ոչ՝ կենդանագիրնիդ, հանդերձ Բոժոժիկեան կնդակաւ։»

Կարծէք այդ տողերը՝ ոչ թէ մի լրագրի մէջ են տպված, այլ թիւրքաց մի լրտեսի գաղտնի զեկուցագրի մէջ։ Փոխանակ քննադատելու թղթակցի գրածը, «Հայելի» լրագիրը, լրտեսի յատուկ ձեռքով, զարդված է այն հարցով թէ ով է երեք աստղի տակ ծածկված մարդը... Ուրեմն ինչպէս կարելի է պատասխանել այդ անպտուղ թերթին...

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԲԷԼՕՍՏՕԿ, 28 օգոստոսի։ Օգոստոսի 27-ին լուսաբացին, զօրագնդերը չտապեցին դէպի վարչական չօսէն բարձրագոյն զօրահանդէսի տեղը։ Առաւօտեան ժամ 9-ին ընդարձակ դաշտը լի էր զօրքերով։ Նրա կենդրոնում չինված էր արքայական պավիլիոն, ռուսական տերեմի ձեւով։ Զօրահանդէսի հրամանատարն էր մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեվիչ։ Երբ Նոցա Մեծութիւնները զօրահանդէսի տեղն եկան, մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեվիչը մատուցեց Թագաւորին զեկուցագիր։ Զօրահանդէսի վերջանալուց յետոյ, անտառակում կայացաւ բարձրագոյն նախաճաշ, որի ժամանակ Թագաւորը չնորհակալութիւն յայտնեց զօրահանդէսի համար և խմեց զօրքի կենացը։ Ապա Նոցա Մեծութիւնները գնացին երկաթուղու կայարանը։ Ուրախների ողողված աղաղակներով օրվայ ժամը 2 և 55 րոպէին, կայսերական գնացքը չարժվեց դէպի Բելովէժ։

Կ. ՊՕԼԻՍ, 28 օգոստոսի։ Սօլսբիւրին առաջարկում է, որ Թեսալիան մաքրվի թիւրքաց զօրքերից՝ հաշտութեան նախնական պայմանները ստորագրելուց մի ամիս յետոյ։ Մեծ պետութիւնների՝ նոր և հին փոխառութիւնների վրա հսկելու խնդիրը կարգաւորված է։

ԼՕՆԴՕՆ, 28 օգոստոսի։ «Times»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ դեսպանները, երկուշաբթի, իրանց կառավարութիւններից հրահանգներ ստանալուց յետոյ, ընդունեցին Սօլսբիւրիի նոր առաջարկութիւնները փոքր փոփոխութիւններով և ներկայացրին ոչ պաշտօնական կերպով Թէվֆիկ փաշային, որի վրա այդ առաջարկութիւնները նպաստաւոր տպաւորութիւն թողեցին։ Բանակցութիւնները թօփխանայում վերսկսվեցին հինգշաբթի։

Կանայից հեռագրում են «Times»-ին, որ Ջաւադ փաշան գնացել է Բէտիմօ և Կանդիա։ Նրա պաշտօնը համարվում է չաջողված։ Ասում են, Ջաւադը խնդրել է յետ կանչել իրան Կրետէից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Կ Մ. ՋԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—12½—1½ ժ. ներքին, ականջի, կոկորդի և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է առնում մզդի, խիպ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Ի տեղի հիւանդանոցի վերատեսչի՝
Բժ. Ա. Գ. ԳՈՒՐԿՕ

Լոյս տեսաւ

ՄԻՐ-ԿՕՆՕՒ ԱՌԱՆՑ ԼԱՐԵՐԻ

անունով գրքոյկը

ԳԻՆԸ 20 ԿՕՊԷԿ

Վաճառվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում. կարելի է դիմել նաև հետեւեալ հասցէով՝ Шулаверы, Андреасу Миракянъ.

(№ 101) 1—2

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՄԻ ՏՆԱՅԻՆ ՎԱՐԺՈՒՀԻ

Մի երեխայի հետ պարապելու համար. պիտի իմանայ հայերէն և ռուսերէն լեզուներ։ Պայմանների մասին տեղեկանալ Գաֆեանցի մագազինում, Երևանեան հրապարակում։

(№ 101) 1—3

ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԺՈՂՈՎԻՑ

Ա. ՕՐԲԷԼԻ

վերանորոգել է հիւանդների ընդունելութիւնը իր

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ

Սօլօլակի փողոց, № 14—16, սեփական տուն

(№ 101) 1—2

ՄԻ ՊԱՏԻԱԻՈՐ ԸՆՏԱՆԻՔ

Ընդունում է երկու փոքրահասակ աշակերտներ կամ աշակերտուհիներ՝ կերակրելու և խնամելու, ձեռնտու պայմանով։ Մաքուր և առողջարար բնակարան։ Կատարեալ հոգատարութիւն։ Հարցնել Ալիխանովի մագազինում, Լորիս-Մելիկովսկայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը։

(№ 93) 5—5

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ

Խիթարեան քոյրերը

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ և պատրաստում պեսական դպրոցներ մտնելու համար։ Հասցէն՝ Իլմայելեան փողոց, սեպհական տուն։

(№ 99) 3—3

ԱՐԴԱՆՈՒՉԻ

ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿԱՅ ԾԽԱԿԱՆ ՄԻԴԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ համար հարկաւոր է մի ցեղաւոր վարժուհի, որ հմուտ լինի հայերէն և ռուսերէն լեզուների։ Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրութեան։

(№ 84) 3—3

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿՆԵՐ

ձեռնտու պայմաններով։ Դիմել՝ Աբասաբադակի հրապարակ, Մողնու երրորդ նրբափողոցում, № 23, տուն Շահբուդաղեանցի։ Հարցնել վերին յարկում։

(№ 99) 3—4

Բացված է բաժանորդագրութիւն

ՐԱՖՖԻ

ՍԱՄՈՒԷԼ

Ա. Բ. Լ. Գ. գիրք

ԳԱԻԻԹԻԿ

Ա. Բ. Լ. Գ. գիրքը վերջաբանով

և

ԿԱՑԾԵՐԻ

Լիակատար երկրորդ հատորն։

Առանձին 2 ր. 50 կ. երեքը միասին 6 ր. Լոյս տեսնելուց յետոյ . . . . . 10 ր.

Տպագրութիւնը լինելու է Եւրոպայում ամենաչքեղ կերպով։

Հեղինակի վաճառելի երկերը ստանալու համար դիմել։—ТИФЛИСЪ, Аршаку Раффи. արտասահմանի համար. M me Raffi. 26 Loftus Road, Sherherd's Busf. LONDON W.

(№ 97) 3—5

УЧИЛИЩЕ И ПАНСІОНЪ

Кол. Ас. Ив. З. ТЕРЪ-СТЕПАНОВА

готовитъ въ гимназіи и др. уч. на бухгалтера. Съ платою въ мѣсяцъ за ученіе отъ 6 р., пансіонъ отъ 15 р. Курсъ бухгалтеріи отъ 25 р. Близъ памятника Воронцова. Елизаветинская, № 30.

(№ 95) 4—8

ԿՏԱՒԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ

(Բամբակի մանուածքի)

ԺԱՌԱՆԳՈՒՀԻՆԵՐԻ Յ. ՉԻԹԱԽԵԱՆԻ

(Հիմնված է 1869 թ.)

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

ԿՏԱՒ ՍՈՎՈՐԱԿԱՆ 15—30 ՎԵՐՇՈԿ ԼԱՅՆՈՒԹԵԱՄԲ
ԿՏԱՒ I ՏԵՍԱԿԻ 15—30 » »
ԿՏԱՒ ՀԱՍՏ » 12—30 » » (մասնաւոր պատուէրներով)

ԹԵԼ, ԿԾԻԿՆԵՐՈՎ,
ԹՈԿ ԲԱՄԲԱԿԻ ԹԵԼԻՑ 1/4"—3" ՀԱՍՏՈՒԹԵԱՄԲ
ԹԵԼԻ ԾԱՅՐԵՐ (пакля) ՄԵԲԵՆԱՆԵՐ ՄԱԲՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

ԲԱՄԲԱԿ ՄԱԲՐԱԾ (вата) I ՏԵՍԱԿԻ
ԲԱՄԲԱԿ ՄԱԲՐԱԾ II »
ԲԱՄԲԱԿ ԹԵՐԹԵՐՈՎ, I ՍՈՍԻՆՁՈՎ (մասնաւոր պատուէրներով)
ԲԱՄԲԱԿ ԹԵՐԹԵՐՈՎ, II » ՆՇՇՏՈՎ,

Առաջարկում ենք պ.պ. վաճառականներին և գործածողներին ուշադրութիւն դարձնել մեր գործարանում պատրաստվող կտաւի ամրութեան և ներկեր ընդունելու յատկութեան վրա և չը չփոթել Ռուսաստանից եկած կտաւների հետ։

Կտաւի նմուշները և պրէյսկուրանտները ուղարկվում են ըստ առաջին պահանջման ձրիաբար։

Հասցէն՝ Тифлисъ, главная контора фабрики. Уголъ Нагорной и Сергіевской ул. собс. д. телефонъ конторы 266, а фабрики 24. (յ. ե.) (№ 78) 13—50

Մոսկվայում բացված է բաժանորդագրութիւն

ՄՕՏԵՐՍ ԼՈՅՍ ՏԵՍՆԵԼԻ

"БРАТСКАЯ ПОМОЩЬ

ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ"

ԳՐԱԿԱՆ-ԳԻՏՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԱՄԱՐ

Ժողովածուի մէջ, ի միջի այլոց, զետեղված են՝ ոտանաւորներ՝ Կ. Բ., Ա. Մ. Ժեմչուժնիկովի (լիակատար ֆակսիմիլէ), Ի. Ա. Բելօուսովի, Վ. Գոլովաչովսկու, Սավելիևի, Բալմոնտի, Ֆ. Է. Կոչի, Վ. Հէսսէնի, Ա. Լ. Բորովիկովսկու, Ե. Կ. Ամիրէկովայի, Ս. Ի. Զախոտինի, Կոչեվիչի, Իվան-դա-Մարիայի, Վ. Գոլովաչէվսկու, Վ. Բելօուսովի, Կանսոնի, Ալ. Ծատուրեանի, Թումանեանի և ուրիշների։ Նամակներ—Բելինսկու, Գերցէնի, Մ. Ե. Սալտիկովի (լիակատար ֆակսիմիլէ), Լ. Ն. Տոլստոյի (լիակատար ֆակսիմիլէ)։ Պատմուածքներ—Գ. Ն. Մամին-Սիբիրեակի, Կ. Ս. Բարանցեվիչի, Վ. Գ. Կորոլենկոի, Ն. Ն. Զլատովրատսկու, Աստախովի, Ն. Դ. Տելեշովի, Ա. Ա. Վեսելովսկու և ուրիշների։ Յօդուածներ հետեւալ պրոֆէսորների—Պ. Ն. Մելիկովի (Գրանովսկու դասախօսութիւնների անլայտ դասընթացը), Ի. Ր. Տարխանովի, Մ. Մ. Կովալեվսկու, Կ. Ա. Տիմիրեազեվի, Ա. Ն. Կարիչեվի, Վ. Գ. Սպասովիչի, Ն. Ի. Յոտրովենկոի, Վ. Ֆ. Միլլերի, Ա. Ն. Վեսելովսկու, Գ. Ա. Խալաթեանցի, կոմսուհի Պ. Ս. Ուվարովայի, Մ. Ա. Վենեվիտինովի, Մ. Վ. Նիկոլսկու, Գ. Ի. Բանանեանի, Վ. Ա. Գոլցէվի, Բուկվայի, Դիոնէօի, Պ. Ա. Բելոգոլովի, Բարոն Շտակելբերգի, կոմս Լ. Ա. Կոմարովսկու, գեներալ Պոտաոյի, Պ. Ն. Օբնինսկու, Ա. Ն. Սազոնովի, Ա. Ս. Խախանովի, Զոբանեանի, Վ. Ե. Երմիլովի, Վ. Վ. Վերեշչագինի, իշխան Է. Է. Ուխտոմսկու, Վ. Ա. Գոլմարէմի, Ս. Դ. Մախալովի, Լ. Զ. Մսերեանցի, Վ. Ե. Երմիլովի, Գ. Ա. Զանչիէվի, Ու. Ա. Վեսելովսկու, Մ. Բերբերեանի և ուրիշների։

Ժողովածուին կցած կը լինի Յ. Կ. Այվազովսկու չորս ինքնուրոյն նկարները, Վ. Ե. Սուրենեանցի շրջանկարները, աւելի քան 100 տեսարաններ և տիպեր Անդրկովկասի և Թիւրքահայաստանի, հեղինակների ֆակսիմիլէներ, պատկերներ, ի միջի այլոց, Բելինսկու, Նրա ընտանիքի, Գրանովսկու, Սալտիկովի, կոմս Լորիս-Մելիքովի, Բելոգոլովիի, Վ. Ա. Արցիմովիչի, Ս. Ի. Զարուդնոյի, Կաթուղիկոս Մկրտիչ I-ի, հայր Ալիշանի, Ադամեանի, գեներալ Լազարեվի, Տէր-Ղուկասովի, Շելկոշնիկովի, Յ. Այվազովսկու, Էմինի, Պատկանեանների, Քանանովի և այլն և այլն

Բաժանորդագրութիւն ընդունվում է. «Русскія Вѣдомости» լրագրի գրասենեակում Կարբանիկովի (Маховая), «Трудъ» (Тверская). «Новое Время»-ի, Վոլգի (Кузнецкій Мостъ), «Русская Мысль»-ի (Никитская) գրավաճառանոցներում։

Հասարի գինն է (մօտ 900 մեծադիր երեսներ) 4 բուբլի, չքեղ թղթի վրա 5 բուբլի։ Գիրքը լոյս տեսնելուց յետոյ գինը կաւելանայ։

Խմբագրութեան հասցէն.—МОСКВА, Зубовскій бул. д. 6, кв. 1.

Ժողովածուի նպատակին համակրող հրատարակութիւնները թող բարեհաճեն արտատպել այս յայտարարութիւնը։

5—5

Խմբագիր՝ ԳՐ. ՋԱՆՇԵԱՆ

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մանելով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 3/15 սեպտեմբերի ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Հինգշաբթի, 18/30 սեպտեմբերի ԼԱ ԳՕԼ շոգենաւը, նաւապետ ԼԱՊԼԷՐ, մանելով Կ. Պոլիս, Մարսէլ, Հաւր, Գիբրալտարեն և Անտվերպեն, և այդպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ։ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Ամոնին, Նարէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Դ. Բարեկենդանեանին, Միհնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ա. Դիլդարեանին, Կոլիբեանսկայա հրապարակ։ ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—պ. Մելիտոր Հերշինզոնին։

(№ 76) 20—20

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ծրագիր. 1) առևտրական թուաբանութիւն. 2) կրկնակի հաշուապահութիւն ՆԱԻԹԱՅԻՆ—ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ, առևտրական, բանկային և այլն. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) վայելչագրութիւն։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ, ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՑ

Բաղու, Ֆատաբսկայա փողոց, տուն № 30.

Կուրսերի հիմնադիր՝ Ա. ՏԷՐ ԴԱՍՊԱՐԵԱՆ

Վաճառվում է հիմնադրի նոր գիրքը՝

„КРАТКІЕ ОЧЕРКИ ПО НЕФТОПРОМ.-ЗАВОДСКОМУ СЧЕТОВОДСТВУ"

(№ 83—հ. յ.) ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 9—20

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական ֆնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիզօնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(հ. յ.) (№ 76) 13—25

ՅԱԿՈԲ ԽԱՉԱՏՐԵԱՆ ՔՈՉԱՐԵԱՆՑ ՈՐ ՈՒՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

և աշակերտական բնակարան և վարժուհի օր. Սօֆիա Քոչարեանց ընդունում են աշակերտներ և աշակերտուհիներ և պատրաստում են առարկաներից և օտար լեզուներից։ Միքայէլեան փողոցից Բէուտօվսկայա փողոց, տուն № 33, Նիկողոսեանցի։ Աշակերտական բնակարան ունենալու մասին յայտնի է 3 և 2 դիմնադիրներին և բէալական ուսումնարանին. ուստի դրա համար պատասխանատու եմ Յակոբ Խաչատրեան Քոչարեանցս. Թիֆլիս. (տես նոյնպէս «Кавказъ» 1897 թ. № 206)։

(№ 100) 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

յանձն է առնում մաքրել կեղտահորերը։ Աշխատանքը կատարվում է սինեվմատիքական նասոսով, որը վառարան ունի՝ գազերի հոտը ոչնչացնելու համար։ Պատուէր տալու համար պէտք է դիմել ուղրավայի չինարարական բաժինը։ Գները՝ ըստ համաձայնութեան։

(№ 99) 3—3

ՄԱՍՆԱՒՈՐ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օր. Ե. Յովհաննեանի

Սադովայա և Վելիամինովսկայա փողոցների անկիւն, տուն Օհանեանի։

Ընդունվում են երկու սեռի մանուկներ և պատրաստվում դիմնադիսներ, բէալական և այլ պետական դպրոցներ մտնելու համար։ Ընդունելութիւնը ամենայն օր։

(№ 95) 3—5

ԲԱԳՈՒ

Ռուսումնարան Ա. Բաքալեանի

Ընդունվում են երեխաներ դիմնադիայի, բէալական և այլ դպրոցների համար պատրաստելու։ Հասցէն՝ Старо-почтовая փողոց, տուն Հաջի-Նէյմաթի։

(№ 94) 6—15

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Августа 1897 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.